ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա **«Ես և շրջակա աշխարհը» IV դասարանում դասընթացի ուսուցման արդյունավետության բարձրացման միջոցներն ու հնարները**

(թեմայի անվանումը)

Կատարող՝ Մարիամ Էմանվելի Նալբանդյան՝

III խումբ, Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոց, դասվար,

(անուն, ազգանուն, հայրանուն. դպրոց, մասնագիտություն)

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

(անուն, ազգանուն)

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

§ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» IV ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ 5

1.1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

1.2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.. 8

§ 2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 10

2.1.ԴԱՍԱԳՐՔԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ 10

2.2. ՔԱՐՏԵԶԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ 14

2.4 . ԽԱՂԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» IV ԴԱՍԱՐԱՆԻ. 16

ԴԱՍԸՆԹԱՑԻՆ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Կրթական բարեփոխումների ներկա փուլում ուսուցման մեթոդների ու միջոցների ճիշտ ընտրությունը և հատկապես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումն ուսուցման արդյունավետության բարձրացման կարևորագույն պայմաններից է:

Խիստ կարևոր է հագեցած ուսումնական միջավայրի ստեղծումը:

Հանրակրթության արդի համակարգը անհնարին է պատկերացնել առանց նորացված մոտեցումների: Ուսուցչի համար այն պետք է ծառայի որպես դասապրոցեսի ակտիվացման, դասի նախապատրաստման, ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց:

Ուսուցման գործընթացում աշակերտների մտավոր ներուժի և կրթության համակարգի փոխպայմանավորվածությունը պարզելու համար անհրաժեշտ են գիտականորեն հիմնավորված և կիրառական համապատասխան փորձառություն անցած մեթոդական ուղեցույցներ: Միաժամանակ պետք է պահպանել ուսուցմանը ներկայացվող կրթության համակարգի պահանջները՝ ապահովելով դրանց իրագործման հնարավոր և հիմնավոր միջոցները:

«Ես և շրջակա աշխարհը» IV դասարանի դասընթացին թեմաների ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է դասավանդման ավանդական մեթոդների և ուսուցման տեխնոլոգիական արդի մոտեցումների մասնագիտորեն ճիշտ համադրմամբ:

Աշխատանքի նպատակը:

Ներկայացնել ուսուցման միջոցների ու հնարների բազմազանությունը և դրանց դերը ուսուցմնական գործընթացում, հիմք ընդունելով հանրակրթությանը ներկայացվող, գոյություն ունեցող և նոր առաջ քաշված պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները:

Աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել ուսուցման միջոցների ու հնարների բազմազանությունը տարրական դպրոցում:

- Վերլուծել ուսուցման միջոցների ու հնարների առանձին տեսակների անհրաժեշտությունը և կիրառման ձևերը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասերին IV դասարանում:
- Տալ ուսուցման միջոցների ու հնարների բազմազանությունը տարաբնույթ աշխատանքների իրականացման ժամանակ:
- Ներկայացնել ուսուցման միջոցների ու հնարների դերը սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի արձանագրման, թերությունների բացահայտման ու շտկման գործընթացում:

Մեթոդները. Աշխատանքում կիրառվել են նկարագրական, համեմատական-վերլուծական, համադրման, դեդուկցիոն ինդուկցիոն, ԱՏՏ, ինտերակտիվ արդի մեթոդներ:

§ 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» IV ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

1.1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության անդամ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը [6]:

Դասընթացի ուսուցման միջոցների հնարների ստեղծման և կիրառման ժամանակակից տեսությունում ու պրակտիկայում գործում է միասնական գիտականորեն հիմնավորված եզրութաբանություն:

Ուսուցման միջոց է կոչվում դպրոցում առկա այն կահավորանքը, որը կիրառվում է ուսումնադաստիարակչական գործընթացում սովորողների համակարգված գիտելիքների և աշխարհայացքի ձևավորման նպատակով: [8]

Ուսուցման միջոցների համակարգ հասկացությունը համակարգված և փոխկապակցված ամբողջությունն է, որն ուղղված է դպրոցի առջև ծառացած ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը:

Այստեղ ներառվում են **ուսուցման տեխնիկական միջոցներ,** որոնք օգտագործվում են ցուցադրման, ձայնագրման, տեղեկության վերարտադրման, փոխանցման և վերահսկման համար:

Դպրոցում կիրառվող ուսուցման միջոցներն ունեն իրենց զարգացման պատմությունը՝ ըստ որի առանձնավցում է ուսուցման միջոցների երկու խումբ՝

1. ուսուցման ավանդական միջոցներ,
2. ուսուցման ժամանակակից միջոցներ:

Ուսուցման ավանդական միջոցների խմբին են պատկանում այն միջոցները, որոնք գոյություն ունեն արդեն մի քանի տասնամյակ, վաղուց լայնորեն կիրառվում են դպրոցական պրակտիկայում, դրանք են՝ դասագրքեր, ուսումնական քարտեզներ, նկարներ, սարքեր և սարքավորումներ:

Ուսուցման ժամանակակից միջոցների խմբին են պատկանում այն միջոցները, որոնք ստեղծվել են վերջին ժամանակներում նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիման վրա և լիարժեք ապահովում են դպրոցի պահանջները: Դրանք են՝ համակարգչային ծրագրերը, երկրատեղեկատվական համակարգերը, համացանցը:

Արդի ժամանակաշրջանում կրթության ոլորտում տեղի են ունենում բուռն փոփոխություններ, որոնք ընդգրկում են ուսուցման նկատմամբ հայեցակարգային մոտեցումներ, դրանցից բխելով փոխվում են ուսուցման նպատակները, բովանդակությունը, մեթոդները, որոնք պահանջում են ուսուցման նոր միջոցների ստեղծման և կիրառման անհրաժեշտություն: Բնականաբար շարունակվում է ուսուցման միջոցների մշակման և նորերի ստեղծման գործընթացը [8]: Ներկայումս ուսուցման միջոցների զարգացման գործընթացը կատարվում է ինտեգրման ճանապարհով, այսինքն միախառնվում են ուսուցման երկու խմբեր՝ ավանդականն ու ժամանակակիցը: Գոյություն ունի միախառնման մի այլ եղանակ, երբ, պահպանելով ձևը, փոխվում է բովանդակությունը:

Աղյուսակ 1 «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ուսուցման <u>միջոցների</u> <u>համակարգը</u>



Ուսուցման միջոցների համակարգը ըստ **ուսումնական բնույթի** լինում է.

1. **վերբալ-տեղեկատվական -** տեղեկությունը հաղորդում են խոսքի միջոցով,
2. **դիտազննական -** ստեղծում են ուսումնասիրվող երևույթի պատկերավոր կերպարներ,
3. **տեխնիկական-**գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների արտացոլումն է (աղ1)։

Ուսուցման միջոցների համակարգը ըստ **կիրառման եղանակի** լինում են՝ ցուցադրական և բաշխիչ։ Ցուցադրականներն են՝պատի քարտեզները, նկարները և աղյուսակները։ Բաշխիչ նյութերը նախատեսված են աշակերտների անհատական աշխատանքների համար։

Ուսոցման հնարներ -Մի դասարանում կիրառվող մոտեցումը մի այլ դասարանում կարող է չաշխատել։ Ոստի ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառումը կատարում է ուսուցիչը։ Ավանդաբար դասը ունի 3 մաս՝ դասի սկիզբ, նոր նյութի բացատրություն, սովորածը պարզելու հնարներ։

Շփման առաջին րոպեներին է աշակերտը որոշում դիմացինին լսել, թե ոչ։ Այսինքն դասի հաջող սկիզբը շատ կարևոր է։ Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին։

Կան դասը սկսելու մի քանի հնարներ։

1. Խորհրդավորություն
2. Գուշակություն
3. Զարմանք, անսպասելիություն
4. Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)
5. Մտագրոհ և այլն։ [11]

Նոր նյութի բացատրություն և սովորածը պարզելու հնարները ևս շատ բազմազան են։ Առավել արդյունավետ են ինտերակտիվ մեդոթները և հատկապես դասի 3-րդ մասի համար համակարգչային առանձին ծրագրերի կիրառումը։

Շատ հետաքրքիր է Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ աշխատանքները.

• միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ,

• պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց,

• հղմամբ տարածել պատրաստի վարժությունները,

• յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ,

• հասանելիության աստիճանը և այլն: [11]

Հետաքրքիր օգնություն են ընձեռում նաև P1@ntnet հավելվածի, http://www.Google.com/maps, http://www.wikimapia.org ծրագրեր: Բացի այդ կարելի է կիրառել նաև Arloopa (https://arloopa.com/) հավելված իրականության ծրագիրը, ինչպես նաև 4D թեմատիկ գրքերը DEVAR հավելվածով:

1.2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դպրոցական դասագիրքը՝ գիտելիքի աղբյուր է և տարբերվում է այլ գրքերից դիդակտիկական նպատակով, կառուցվածքով և նյութի շարադրման տրամաբանությամբ: Այն դպրոցական կրթության համար նախատեսված գիրք է, ուր համակարգված ներկայացված են գիտության ժամանակակից մակարդակին համապատասխան բնագիտական գիտելիքներ: Այն կազմված է որոշակի դիդակտիկական տրամաբանությամբ և մշակված է ըստ պետական ծրագրի՝ ելնելով աշակերտների տարիքային առանձնահատկություններից: [7]

Դասագիրքը պետք է ապահովի գիտելիքներ, խթանի սովորողների ինքնուրույն իմացական գործունեությունը: Սկսնակ ուսուցչի համար դասագիրքը ուղղեցույց է դասին նախապատրաստվելու համար, այն օգնում է ընտրել դիտազննական պարագաներն ու լրացուցիչ ուսումնական նյութը:

Դասագիրքը բովանդակում է **երկու բլոկ՝ ուսումնական տեքստ և դիդակտիկական ապարատ (ոչ տեքստային տարրեր)** (աղ 2):

Աղյուսակ 2. «Ես և շրջակա աշխարհը»*դասագրքի կառուցվածքային բաղադրիչները*



Վերջին տարիներին, ստեղծվեցին կայուն, փորձնական և խորացված ուսուցման համար դասագրքեր: Առավել տարածված են **կայուն** դասագրքերը, որոնք համապատասխանում են պետական ծրագրերին և նախատեսված են բազային կրթության բովանդակության իրականացման համար:

Փորձնական դասագրքերը արտացոլում են հեղինակի մոտեցումը որոշակի հարցերին կամ ընդհանուր նյութին:

Խորացված ուսուցման համար դասագրքերը նախատեսված են հատուկ ուղղվածություն ունեցող դպրոցների կամ դասարանների համար, աչքի են ընկնում նյութի յուրահատուկ կառուցվածքով, մատուցման տրամաբանությամբ: Դրանց հիմնական գործառույթն է օգնել աշակերտին ինքնուրույն ճանաչել շրջակա աշխարհը:

«Ես և շրջակա աշխարհը» IV դասարանի դասագրքում առանձնացված են հետևյալ թեմաները 1 և 2 մասերով.

1. **Երկրագնդի բնությունը**
2. **Մեզ շրջապատող մարմիններն ու նյութերը**
3. **Բնությունը և մարդը**
4. **Մեր հայրենիքը**
5. **Տեղանքի հետազոտում: Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ**
6. **Ես և հասարակությունը:**

§ 2. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

2.1.ԴԱՍԱԳՐՔԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ

Հանրակրթական դպրոցներում կատարված հարցումները վկայում են այն մասին, որ ուսուցիչները բարձր են գնահատում ժամանակակից դասագրքերի գործառույթները՝ կարևորելով դրանց դերը ուսուցման գործընթացում։

Դասագիրքը կիրառում են ուսուցման տարբեր փուլերում՝ հատկապես նոր նյութի մատուցման ժամանակ։ [11]

Սակայն պետք է նշենք, որ դասագրքի դիդակտիկական ներուժը ոչ լիարժեք է իրացվում ուսուցման գործընթացում։ Ուսուցիչն ավելի հաճախ է դիմում դասագրքում զետեղված նկարներին, քան տեքստին, իսկ աշակերտները դասին նախապատրաստվելիս սահմանափակվում են տեքստի ընթերցմամբ՝ ուշադրություն չդարձնելով ոչ տեքստային բաղադրիչներին։ Այս թերությունները պայմանավորված են դասագրքի հետ կազմակերպվող աշխատանքների թույլ պլանավորմամբ, մինչդեռ այն կարևոր նախապայման է դասի արդյունավետության ապահովման համար։

Դասագրքի հետ աշխատանքը սկսվում է ծանոթացումից, այսինքն յուրաքանչյուր թեմայի, դասի ուսումնասիրումը ուսուցիչը սկսում է դասագրքի վերլուծությունից՝ նշվում է վերնագիրը, անվանում հեղինակին, ծանոթացնում գլխացանկին, նյութի ներկայացման ձևին, եզրութաբանական բառարանին, ներդիր քարտեզներին, աղյուսակներին, հավելվածին և այլն։

Կարևոր է սովորեցնել երեխաներին տարբերել հիմնական, բացատրական և լրացուցիչ տեքստերը, հասկանալ դրանց կառուցվածքը, առանձնացնել տրամաբանական մասերը, գտնել կառուցման սկզբունքները, բացահայտել նպատակը և մասերի միջև առկա փոխադարձ կապերը։

«Ես և շրջակա աշխարհը» դասագրքի հետ գործնականում առավել ընդունված աշխատաձևերն են՝ **բացատրական ընթերցանություն, իմաստային պլանի կազմում, ընտրովի ընթերցանություն, համեմատական բնութագրի կազմում, տեքստի և քարտեզի համադրում, բառային աշխատանք։**

Բացատրական ընթերցանությունը անցկացվում է դասընթացի սկզբում խրթին թեմաների կամ դասի մեջ խրթին հատվածների ուսումնասիրման ժամանակ։

Իմաստային պլանի կազմումը ընթերցած տեքստի հիման վրա կարևոր աշխատանք է, այն սովորեցնում է աշակերտներին տրամաբանական հաղորդակցությամբ շարադրել նյութը, տարազատել նրանում կարևորը երկրորդականից։

Ընտրովի ընթերցանությունը նպատակաուղղված է անհրաժեշտ նյութի ընտրությանը հասկացությունների և երևույթների փոխկապակցվածության բացահայտման նպատակով։

Համեմատական բնութագրի կազմումը տեքստի մշակման հիման վրա անհրաժեշտ է թե՝ դասարանում, թե տանը։ Համեմատության մեթոդը կիրառվում է ինչպես մեկ տեքստի ներսում, այնպես էլ միաժամանակ մի քանի տեքստերի հետ աշխատելու ընթացքում, որը նպաստում է տրամաբանական մտածողության զարգացմանը, վերլուծությանն ու համադրմանը, գլխավորը գտնելու կարողությանը, պատճառների և օրինաչափությունների բացահայտմանը, որոնք պայմանավորում են նմանություններն ու տարբերությունները։

Աղյուսակ 3 . Հարցերի և առաջադրանքների տիպաբանությունը (ըստ Պ. Վ. Դուշինայի) [11]



Դասագրքի հետ կատարվող բոլոր գործողությունները ուղեկցվում են **բառային աշխատանքով**։ Այս աշխատանքը սկսվում է առաջին դասերից, երբ ուսուցիչը գրառում է գրատախտակին բառեր և բացատրում է դրանց նշանակությունը, ցույց տալիս քարտեզի վրա։ Այս կերպ ուսուցիչը տալիս է մասնագիտական լեզվի տիրապետման ու եզրույթների և որոշ բարդ տեղանունների ճիշտ, առանց աղավաղումների մտապահման է։

Աշխատանք հարցերի և առաջադրանքներ համակարգի հետ։ Դիդակտիկական ապարատում առանցքային դիրք է գրավում հարցերի և առաջադրանքների համակարգը։

Հանձնարարությունները ուղղված են տեքստի և պատկերազարդ նյութի հետ կապված աշխատանքների կազմակերպմանը, ինչը նպաստում է աշակերտների վերլուծական մտածողության զարգացմանը: Հանձնարարությունները տարբերվում են իրենց ձևավորումներով և ուղղված են նյութի բովանդակության նյութի բովանդակության տարբեր բաղադրիչների ձևավորմանը(աղ3):

Այս առաջադրանքների կատարումը դասի ընթացքում պետք է կրի մշտական բնույթ, որպեսզի վերածվի սովորողի կողմից իմացական պահանջմունքի: Աշակերտներին պետք է սովորեցնել պատասխանել տեքստում զետեղված հարցերին, քանի որ, դրանք հաճախ լրացնում են տեքստում բաց թողնված տեղեկությունը և ուղղորդում աշակերտին հիմնական բովանդակության յուրացմանը: Դասի կամ պարագրաֆի վերջում զետեղված հարցերը նպատակահարմար է կիրառել նոր նյութի ամրապնդման ընթացքում, իսկ նախորդ դասի վերջին հարցերը՝ տնային հանձնարարության ատուգման ընթացքում: Ի դեպ, այս պարագայում աշակերտները կարող են օգտվել դասագրքերից, քանի որ նպատակը ոչ թե ստուգումն է, այլ վերհիշումը:

Աշխատանք տեքստային քարտեզների հետ: Բնագիտական տեքստերը շատ յուրահատուկ են: Նրանք սերտ կապակցված են քարտեզների և ոչ տեքստային տարրերի հետ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է անընդհատ կատարել տեքստի և ներդիր քարտեզների տվյալների համադրում, քարտեզից այնպիսի տվյալների դուրս բերում, որոնք բացակայում եմ տեքստում, մշակել առաջադրանքներ:

Աշխատանք դասագրքի ոչ տեքստային բաղադրիչների հետ: Դասագրքի տեքստն ու քարտեզը լրացվում են աղյուսակներով, գծակարգերով, գրաֆիկներով և տեղեկատվության այլ աղբյուրներով: Դրանց հետ աշխատանքի կանոնները ընդգիկում են հետևյալ դրույթները.

1. տեղեկատվության աղբյուրների վերլուծություն՝ ուսումնասիրվում է նկարի ձևը, պարզվում է, թե ինչ է պատկերված նրանում, ինչ եղանակով է այն կատարված,

2. գիտելիքի դուրս բերումը աղբյուրից և համադրումը տեքստի և քարտեզի հետ: Գրաֆիկների, գծապատկերների, նկարների հետ աշխատելիս սովորողները յուրացնում են

դրանց հետ աշխատելու հնարները՝ կատարում վերլուծություն, համադրում, դասակարգում, համակարգում, համեմատում, ապացուցում և այլն։ [7; 11]

Անհրաժեշտ է վերլուծել դասագրքի պատկերային ապարատը, տարազատելով պատկերները ըստ դիդակտիկական նշանակության։ Դպրոցական դասագրքում ըստ նշանակության լինում են պատկերներ, որոնք՝

1. ստեղծում են պատկերացում օբյեկտի կամ տարածքի արտաքին տեսքի մասին,
2. ապացուցում են տեքստում ներկայացված դրույթները,
3. նպաստում են հասկացության հատկանիշների բացահայտմանը,
4. նպաստում են պատճառահետևանքային կապերի բացահայտմանը,
5. նպաստում են օբյեկտների տարածական տեղաբաշխման մասին պատկերացման ձևավորմանը,
6. լրացնում են տեքստում բացակայող տեղեկությունը։

Դասագրքի կողմնորոշող ապարատը նույնպես պահանջում է ուսուցչի առանձնակի ուշադրություն։ Աշակերտներին պետք է սովորեցնել կողմնորոշել դասագրքի կառուցվածքում գլխացանկի տառատեսակների, նշանների, սիմվոլների միջոցով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը և օգնում է արագ գտնել անհրաժեշտ տեքստը, նկարը, կողմնորոշել հարցերի և առաջադրանքների համակարգը։

«Կարևորի և երկրորդականի առանձնացում»: Դասանյութի մշակման այս ձևը կենտրոնացնում է աշակերտների ուշադրությունը հիմնական գաղափարի վրա։

«Թեմատիկ խաչբառ»: Առաջարկվում է դասանյութից ընտրել որևէ եզրույթ, հասկացություն կամ անվանակարգից որևէ օբյեկտի անվանումը։ Այն դառնում է խաչբառի առանցքը։ Ընտրված եզրույթը չի բարձրաձայնվում, այն պետք է գտնել պատասխանելով առաջարկված հարցերին։

«Ծածկագիր»: Այս եղանակը նման է նախորդին, սակայն առավել ընդարձակ է և հավելված լրացուցիչ նյութերով։ Ընտրվում և ծածկագրվում է եզրույթը։

Դասանյութի մշակման ձևերը բազմազան են և այս հարցում ուսուցչին լայն հնարավորություն է տրվում ցուցաբերել իր սեփական ստեղծագործ մոտեցումը։ [7; 11]

2.2. ՔԱՐՏԵԶԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման միջոցների համակարգում քարտեզը յուրահատուկ տեղ է զբաղեցնում, հատկապես IV դասարանի դասագրքումում:

Ուսուցման գործընթացում քարտեզը հանդիսանում է տեղեկության աղբյուր:

Քարտեզը իր պայմանական նշաններով տալիս է օբյեկտների բնութագիրը, նրանց շարժն ու զարգացումը: Քարտեզի ընթերցումը զարգացնում է աշակերտների դիալեկտիկական մտածողությունը և հանդիսանում առաջարկվող գիտելիքների լիարժեք իմացության հիմք, նպաստում է աշակերտների գիտելիքների համակարգմանը, հեշտացնում է դրանց յուրացումն ու մտապահումը, զարգացնում է աշակերտների երևակայությունը, հիշողությունը, դիտողականությունը, զարգացնում տարածական բնագիտական մտածողությունը:[7]

Դասագրքում ընդգրկված են բազմաթիվ թեմատիկ քարտեզներ՝ Երկրագնդի ռելիեֆի, առանձին մայրցամաքների, հետազոտությունների և հայտնագործությունների վերաբերյալ:

2.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» IV ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԵՐԻՆ

Կրթական բարեփոխումների ներկա փուլում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մեծապես կնպաստի կրթության արդյունավետության բարձրացմանը:

Ներկայումս դպրոցների զգալի մասը կահավորված է համակարգչային դասասենյակներով, որոնք ընձեռում են ՏՀՏ օգտագործման լայն հնարավորություններ: Դասապրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը պետք է իրականացնել՝ ելնելով աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկություններից, ձեռք բերած գիտելիքներից:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասաժամերին, աշակերտների տարիքային առանձնահատկություններից ելնելով, կարելի է ուսուցման գործընթացը կազմակերպել ՏՀՏ-ների հետևյալ միջոցների կիրառումը.

- սահիկահանդես,
- համակարգչային ներկայացումներ,
- ինտերակտիվ գրատախտակներ,
- համակարգչային ուսուցողական խաղեր,
- համակարգչային թեստեր,
- էլեկտրոնային գրադարաններ: [12]

Համակարգչային ծրագրերի օգնությամբ արագ կարելի է փոփոխել ուսուցանվող թեմային առնչվող ցուցադրական նյութը՝ քարտեզները, աղյուսակները, սխեմաները, սահիկները և այլն: Դա հնարավորություն է ընձեռում ավելի պատկերավոր ներկայացնել ուսուցանվող թեման:

Դասավանդման մատչելիությունը ապահովելու և աշակերտների գործնական աշխատանքը կազմակերպելու համար նպատակահարմար է օգտագործել համակարգչային “Microsoft Office” ծրագրային փաթեթի “PowerPoint” ծրագիրը: Նյութերի մշակման համար ցանկալի է օգտագործել նույն փաթեթի “Excel”, “Word” ծրագրերը և այլ տպագիր նյութեր:

Համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ կարելի է անցկացնել նաև գիտելիքների ստուգում: Այդ նպատակով կարող են օգտագործվել ինչպես պատրաստի, այնպես էլ ուսուցիչների կողմից կազմված համակարգչային թեստեր:

Այսպիսով, օգտագործելով ՏՀՏ-ներ ուսուցիչը.

- հոգեբանորեն նպաստում է աշակերտների կողմից նյութի յուրացման գործընթացին և բարձրացնում դասի արդյունավետությունը,
- բարձրանում է աշակերտների ուսումնական ակտիվությունը,
- առաջացնում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ,
- նպաստում է տարածական աշխարհայացքի ձևավորմանը,
- արժևորում է աշխարհագրության կիրառական նշանակությունը,

- նպաստում է դասանյութի դյուրին ընկալմանը,
- մեծացնում է առարկան ուսումնասիրելու ցանկությունը,
- նպաստում է տեսական նյութի ավելի ամբողջական յուրացմանը,
- աշակերտների մոտ ձևավորում է սեփական տեսակետը հստակ ու պարզ արտահայտելու կարողություն: [12]

Հիմնահարցերի նպատակային լուծումը ենթադրում է մեթոդական նոր ցուցումներ ու ծրագրեր, որոնք աշակերտների մոտ կապահովեն անցում վերարտադրողական մտածողությունից ստեղծագործականի, կձևավորեն կառուցողական մտածելակերպ, տեղեկատվական մշակույթ և այն արժևորելու ունակություն:

2.4 . ԽԱՂԻ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» IV ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

Խաղը գործողություն է, որ կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում որպես ուսոցողական գործիք: Խաղը աշխատանք չէ, սակայն խաղի և աշխատանքի միջև սահմանը հստակ չէ և որոշ խաղեր համարվում են աշխատանք և հակառակը:

Խաղային մանկավարժությունը դա մանկավարժության մի բաժին է, որում մանկավարժական գործընթացում կենտրոնական տեղն է տրվում խաղերին:

Խաղի կազմակերպման պահանջներն են երեխաների ազատությունն ու կամավոր մասնակցությունը, գործողությունների իմաստի համապատասխանությունը իրական իրավիճակում պահվածքի հետ, կանոնների ու էության իմացությունը: Խաղի վերջում կատարվում է վերլուծությունը, որից հետո կարելի է վերանայել խաղի բովանդակությունն ու կանոնները:

Խաղերի ընդհանուր պատկերը հետևյալն է.

- Խաղին բնորոշ են՝ մրցումը, կարգուկանոնը, տարերայնությունը, հորինումը և ազատությունը:
- Խաղերը կազմված են 3 փուլից. նախապատրաստական, խաղի

ընթացք և ավարտ՝ պարտություն և հաղթանակ, մեր դեպքում՝գնահատում:

●Խաղերում կարևոր են խաղի կանոններին ծանոթացնելը,

ինչպես նաև խաղի ինտելեկտուալ, իմացական-ճանաչողական բնույթը [9]:

4-րդ դասարանի դասագրքում ընդգրկված դասերը պարունակում են գիտական բնույթի մեծ ծավալով նյութեր, տերմիններով ու հասկացություններով հագեցված, որի ուսուցումը ուսուցչից հսկայական և բազմաբովանդակ աշխատանք է պահանջում:

Աշակերտը ձեռք է բերում հնարամտություն, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ստեղծագործաբար մտածելու կարողություն, կատարում «հայտնագործություն»: Տրված նյութի յուրացման հետ մեկտեղ ձևավորվում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Հենց այս հմտությունները պետք է առավել խորացնել դասընթացի նյութերը մատուցելիս: Առավելություն է նաև ժամաքանակի կրկնապատկումը, պահուստային ժամերի առկայությունը, որոնք կարող են օգտագործվել առանձին թեմաների բազմակողմանի մատուցման համար [2]:

Ելնելով թեմաներից, նպատակահարմար է կազմակերպել մի շարք խաղեր, վիկտորինաներ, մրցույթներ, քարտեզով ճանապարհորդություններ, բաց դասեր, նկարչական թեմատիկ ցուցահանդեսներ և այլ միջոցներ:

Այսպես օրինակ, Երկիր մոլորակը, ռելիեֆի հիմնական ձևերը, մայրցամաքները, օվկիանոսները անցնելիս նպատակահարմար է ընտրել թիմային մրցույթ-խաղի մեթոդը, դասերին համապատասխանող հարցերով, նկարելուկներով և այլ բովանդակությամբ փուլերով: Հարցերը պետք է ընդգրկեն նախատեսված ամբողջ թեման, նկարելուկները (ռեբուսներ) վերաբերվեն հիմնական տերմիններին և հասկացություններին: Հետաքրքիր են նաև «Ո՞վ ավելի արագ», «Գուշակիր մայրցամաքը (օվկիանոսը)» և այլ աշխարհագրական խաղերով փուլերի անցկացումը: [2]

Մարմիններ, նյութեր, նրանց բնութագրական հատկանիշներին ծանոթացնել առարկաների ընտրված կույտից, ուսուցչի հրահանգին համապատասխան կատարելով խմբավորում:

Տնտեսության, նրա ճյուղերի ու ենթաճյուղերի, օգտակար հանածոների վերաբերյալ դասերին կօգնեն դասարանում ստեղծվող ստենդները:

«Հայաստանն իմ հայրենիքն է» դասերի ամփոփումը կատարել «Կառուցենք Հայաստանը» խաղ-մրցույթով, մի քանի փուլով. փոքրիկ բնութագրական քառատողով գտնել մարզը, տեղադրել իր տեղում, ապա տեղադրել նաև մի շարք տեղանուններ կամ դրանց նկարները՝ պատմամշակութային հուշարձանների, նշանավոր մարդկանց, նաև մարզին բնորոշ տնտեսության առավել բնութագրական ճյուղի գործարանի կամ արտադրանքի նկարը և այլն:

Ճանապարհորդություններին վերաբերող թեմաներին կիրառել «Նավապետ-ղեկապետ», «Հետևենք Մագելանին» և այլ նմանատիպ խաղերը, կիրառելով նաև համացանցից համապատասխան տեղեկատվությունը՝ ճանապարհորդների անցած ուղու քարտեզային պատկերը, նավերի, ճանապարհորդների նկարները և այլն: [2]

Մարդ-հասարակություն-փոխհարաբերություններ դասերը ամփոփելիս կիրառել թեմատիկ նկարչական ցուցահանդեսի կամ էլ դերային խաղի մեթոդը, ուսուցչի կողմից առաջարկվող սցենարով:

Այսքանից հետո, իմի բերելով խաղի մեթոդի կիրառման անհրաժեշտությունը, պետք է հիշել մեծ մանկավարժներին:

«Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Խաղը մի հսկա, լուսավոր պատուհան է, որով երեխայի հոգեկան աշխարհն է լցվում շրջակա աշխարհի մասին հասկացությունների, պատկերացումների կենդանի հեղեղը: Խաղը կայծ է, որը հարցասիրության և հետաքրքրության կրակ է վառում»:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Խաղի դաստիրարակչական նշանակության մասին Մակարենկոն գտնում էր, որ երեխան միշտ պետք է խաղա, նույնիսկ եթե կատարում է շատ լուրջ աշխատանք:

Խաղը զարգացնում է երեխայի երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, նպաստում ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը, նպաստում է ուշադրության զարգացմանը;

Երեխայի խաղն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Նա խոսում է նույնիսկ այն ժամանակ, երբ մենակ է խաղում:

Խաղերը նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Դրանք դասը դարձնում են հետաքրքրաշարժ և ուշագրավ: Ստեղծվում է աշխատանքային տրամադրություն, դյուրին է դառնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը:

Անգնահատելի է ուսումնական խաղերի դերը կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացում, սակայն այն չպետք է գերագնահատել ու դասը վերածել խաղի:

Այսպիսով շրջակա աշխարհի մասին իմացական բարձր մակարդակ ապահովելու համար շատ կարևոր են ճիշտ և տեղին ընտրված մեթոդները, որոնց միջոցով հնարավոր է դառնում նույնիսկ ամենաբարդ և մեծածավալ նյութը հաղորդել հեշտ ընկալվող և ուշագրավ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում եկանք հետևյալ եզրակացություններին՝

1. Բազմազան միջոցների և հնարների կիրառմամբ հնարավոր է ավելացնել ուսուցիչների կողմից նյութերի մատուցման հետաքրքրությունները՝ դասավանդման ընթացքը դարձնել ակտիվ մասնակցային, խրախուսել վերլուծական, քննադատական միտքը աշակերտների մոտ։
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, դասը դարձնում է հետաքրքիր ու հեշտ ուսանելի, աշակերտները ակտիվ ներգրավված են ողջ դասապրոցեսին, նրանք են փնտրում ու գտնում իրենց անհրաժեշտ ինֆորմացիան, ինչն էլ հանդիսանում է մնայուն գիտելիքի հիմքը։
3. Առանձնահատուկ նշանակություն ունեն բնագիտական խաղերը, որոնց կիրառումը նպաստում է աշակերտների ստեղծագործական ներուժի զարգացմանը, հաղորդակցության և առաջնորդության հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը, թիմին միավորում է ընդհանուր նպատակի շուրջ , նպաստում է տարածական աշխարհայացքի ձևավորմանը։
4. Ներկայացված ուսումնական միջոցների և հնարների միջոցով դասը դառնում է դյուրընկալելի և պահանջված, իսկ դասընթացը՝ սովորողների համար հասկանալի և հաճելի։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադամյան Ն.Վ., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, ուսումնական ձեռնարկ, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, Գյումրի 2018, 264 էջ:
2. Ադամյան Ն. Ջուրը գիտելիքների խաչմերուկում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան, «Արման Ասմանգուլյան» ԱՁ: 2018թ.: 467 էջ:
3. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար: 1-5-րդ դասարաններ: «Մակմիլան-Արմենիա» 2001-2003, 117 էջ:
4. Այվազյան Հ. Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում: Երևան, Դպրոց կենտրոնների միություն: 2014: 48 էջ:
5. Գալստյան Ս., Երկխոսություն համակարգչի հետ. Microsoft Office 2010, Երևան, 2010, էջ 35-39:
6. Նալբանդյան Մ.Է., Ամազարյան Ա.Ն., Խաղի մեթոդի կիրառումը «Ես և շրջակա աշխարհը» դասընթացին, ՇՊՀ, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Գյումրի 2020:
7. Հովսեփյան Ա. և ուր. «Ես և շրջակա աշխարհը», Մաս 1, Մաս 2, ՄԱՆՄԱՐ, Երևան 2021թ
8. Տարրական դպրոցի, առարկայի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան, Աստղիկ գրատուն 2006թ, 56 էջ:
9. Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչ և ծրագիր (2-4-րդ դասարաններ), Հոդված N 1, ՀՀ ԿԳ նախարարություն: «Մակմիլան-Արմենիա», 80 էջ 2012 թ.:
10. Տողանյան Ն. և ուր. «Ես և շրջակա աշխարհը» 2-4-րդ ուսուցչի ձեռնարկ: Երևան, ՄԱՆՄԱՐ: 2013: 79 էջ :

Նյութեր համացանցից

11. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf 22.04.22 -Ուսուցման Արդյունավետ Հնարներ Teach ForArmenia https://arm.teachforarmenia.org/ :
12. http://shsu.am/media/journal/2019n2a/23.pdf (էջ 227-237:)